այդ լաւ է, եթէ այդ գնումների համար փող կայ, իսկ եթէ փող չը կայ, այդտեղ կօշմարն աւելի ճնշող է։ Մանաւանդ դժուար է աղքատ դասակարգի դրութիւնը։ Նա ոչ փող ունի, ոչ միջոց վերև յիշեալ պարագները ձեռք բերելու համար, ուստի նրան աւելի է ճնշում փողի սղութիւնը, քան դժան ձմրան ուրուականը, որ արդէն եւ բերում է նրա ցուրտ խրճիթի երդիկի վրայ։

Ցաւալի է և աւելի ճնշող այն հանգամանքը, որ այդ դասակարգը իր նիւթական կարգադրութեան հետ կորցրել է նաև անձնական հաւատարմութիւնը։ Նրան այլ ևս ոչ ոք չէ հաւատում։ Նա պարտ է շատերին և բոլորի մօտ «սև երեսն», ուստի նրան այլ ևս ոչ ոք ապահով բաց չէ թողնում և ոչ մի լուցկի, քանի որ նա արդէն վաղուց յետէ խեղդված է հին եւ նոր պարտքերով, որոնցից մի ելք անգամ չէ կարողանում գտնել, հետևապէս այդ դասակարգի մարդկանց այլ ևս ոչ ոք «ձեռք չի բռնիւում», փող և պարտք չէ տալու իր մանր ձմերը քաղցից և ցրտից ազատելու համար...

Ուստի շատ ընկան է, որ այդ ազքատ դասակարգին պատկանած ընտանիքները, որոնց թիւը հարիւրաւորներ են մեզանում, դատապարտված են իրանց սև օրը անցկացնել առաջիկայ ձմրան ընթացքում ամենադժնդակ կացութեան մէջ, քանի որ նը բանք ամեն կողմից համակված են ամենաթշուառ դրութեամբ։ Երեխաները տկլոր, ոտաբոբիկ, անկուշտ փորով և այլ այսպիսի անմխիթար պայմաններով շրջապատված։

Ի՞նչ կը լինի այդպիսիների դրութիւնը առաջիկայում, դա ապագայի մութ հարցերից մէկն է, որի լուծումը կամ պատասխանը միայն իրան՝ Ալլահին է յայտնի։

Որսորդ

ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ՏՕՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱԼԻԱՌԻՄ

I

Սիմֆերօպոլ, 14 հոկտեմբերի

Ըստ Էջմիածնի Կենտ. Ցանձնաժողովի կարգադրութեան՝ ամսի 13-ին տեղիս հայոց եկեղեցում Մեսրոպեան տաճերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով հոգեհանգիստ կատարվեց, իսկ 14-ին՝ հայրապետական մաղթանք։ Աւուր պատշաճի խօսից ծխատէր Ե. ք. Նալբանդեանը։ Բազիկ

II

Մարաղա գիւղ (Զիւանշիրի գ.), 13 հոկտ.

Այսօր մեր գիւղի եկեղեցում, հայ տպագրութեան 400-ամեակի և տաճերի գիւտի 1500-ամեակի առիթով, ի յիշատակ հայ գրականութեան հանդուցեալ վաստակաւորների, հոգեհանգիստ կատարեց տեղիս ծխատէր քահանան։

Հոգեհանգստին ներկայ էր գիւղի ժողովուրդը։ Ա. Ցովակիմեան

III

Թէոդոսիա, 13 հոկտեմբերի

Թէոդոսիան էլ, որպէս մի հայկական գաղութ, յետ չը մնաց իր հերթին մասնակից լինելու համազգային մեծ տօնի առիթով կատարվելիք հանդէսին։

Համաձայն Թեմիս առաջնորդի գրաւոր կարգադրութեան, տեղիս ծխատէր քահանան իրան յանձնված հօտի անդամներին հրաւիրեցին, որ հոկտ. 13-ին կատարվելիք եկեղեցական հանդէսին ներկայ լինեն։

Տեղիս ծխ. դպրոցի վարչութիւնը այսօրվայ հանդէսին ակտիվ մասնակցութիւն ցոյց չը տուեց, առարկելով որ այս տարի դպրոցում ուսումը սկսվել է համարեա սեպտեմբերի վերջերին, ուստի աշակերտութիւնը անպատրաստ է պահանջված ծրագրով կատարելու այդ հանդէսը, մանաւանդ որ հանդէսի ծրագիրը այստեղ ստացվեց սեպտ. 11-ին։

Դպրոցի ուսուցչական կազմը ուրոյնց լաւ պատրաստվել և տարվայ ընթացքում մի յարմարաւոր օր տօնել այդ նուիրական հանդէսը։

Ամսի 13-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, առաւօտեան ժամը 9½-ին, սկսվեց եկեղեցու զանգահարութիւնը, իսկ ժամը ուղիղ 10-ին պատարագը։ Պատարագին երգում էր դպրոցի աշակերտները։ Պատարագից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ հանդուցեալ Թարգմանիչների յիշատակին։ Թէ պատարագին և թէ հոգեհանգստին ներկայ էին ծխ. դպրոցի երկտեղ տանները՝ առաջնորդութեամբ իրանց ազգ վարժուհու և ուսուցչի, իսկ հասարակութիւնը փայլում էր իր բացակայութեամբ։ Նախ քան հոգեհանգստեան արարողութիւնը, պատարագիչը աւուր պատշաճի քարոզ խօսեց։

Կ. ս. Աբգարեան

IV

Հոկտեմբերի 14-ը, կիրակի, մի փառաւոր տօն էր Ալէքսանդրօպոլի ամբողջ ազգաբնակութեան համար։ Այդ օրը նշանակված էր քաղաքի ծխական և քաղաքային (ինքնավարութեան) դպրոցների հանդիսաւոր թափօրը՝ ի պատիւ համազգային զոյգ մեծագոյն յօբելեաններին։

Արդէն ժամը 9-ից սկսս. Փրկիչ եկեղեցու հրապարակը լցված էր հասարակութեան բոլոր խաւերի հոծ բազմութեամբ ու դրոշների աշակերտ-աշակերտուհիներով, որոնք շարէ-շար կանգնած էին իրանց տօնական դրօշներով (ամեն մի ըստ մասնմունք, դասարան առանձին-առանձին) և դպրոցների անունը ոսկէ տառերով ցուցնող մեծ դրօշակներով, որ շատացող բազմութիւնը կարդում էր առանձին ինքնաբաւական հրճուանքով։ Լսվում էին հոգեկան անվերապահ ուրախութիւնն արտայայտող՝ հատ-հատ կանչեր՝ «Արզութեան դպրոց, կեցցէ Արզութեան դպրոց», «սրբ. Փրկչի վիճակային դպրոց, կեցցէ վիճակային դպրոց» և այլն։

Ժողովուրդն հետզհետէ շատանում էր։ Մինչ այդ եկեղեցում կատարվում էր հայրապետական մաղթանք, որին ներկայ եղաւ գրեթէ բոլոր հայ աշակերտութիւնը, որքան կարող էր մեծ եկեղեցին տեղաւորել։

Պատարագին երգում էր Արզութեան դպրոցի աշակերտուհիների երկձայն երգեցիկ խումբը։

Մաղթանքից առաջ հ. Յակոբ քահ. Խաչվանքեան խօսեց ոգևորված մի քարոզ, որը շատ լաւ տպաւորութիւն արեց։ Երկարօրէն կանգ առնելով դիպուածային տաճերի գիւտի վրա և պարզօրէն բացատրելով գրի կատարած լուսաւոր դերը հայի ազգային միջտ վառնդված կեանքում, հ. Խաչվանքեան արեց իր ուժեղ և ուղիղ եզրակացութիւնը՝ թէ գրերի գիւտով, գրականութեան և ապա տպագրութեան շնորհիւ հայի ազգային երերուն կեանքը վերածվեց ուղղանց շնորհիւ դիմադրեց յետագայ դարերի արհաւիրքներին և հայ գիրն ու հայ շունչը բերեց հասցրեց մեզ՝ այնքան մեծ և զօրեղ մաքառումներից յետոյ, թողնելով մի սուրբ ուտեղ յիշատակներս՝ նմանվել մեծ նախնիքներին, նրանց պէս հայ ապրել և հայ մեռնել։

Մաղթանքից յետոյ ցերեկվայ ուղիղ ժամը 12-ին սկսվեց հանդիսաւոր թափօրը։ Դէրբէնդի գնդի զինուորական երաժշտախումբը հնչեցրեց քայլերգը, ու առաջ շարժվեցին նախ՝ դրօշակակիրները, ապա նրանց ետևից վեց կարգ կողք կող հայ աշակերտ-աշակերտուհիները, թւով 1000 հոգի, և վերջը ժողովրդական տասն-հազարանոց բազմութիւնը։

Իբրև շղթայ գնացքն յուզարկաւորում էին համքարական դրօշակները։ Ժողովուրդը պահպանում էր օրինակելի կարգ և՝ չը նայելով քաղաքի փողոցների նեղուածքին ու մանր տեղացող անձրևին՝ արտաշարժ ուրախութեան ու հրճուանքի տրամադրութիւնը մնաց մինչև վերջն էլ աշխոյժ ու վառ։

Երբ գնացքն ուղղվեց դէպի հայ-կաթոլիկաց ծխական դպրոցը, պէտք էր տեսնել, թէ ինչ տեսարան էր բացվում տարածվում աչքերի առջև։ Հոգեզմայլութեան զգացմունքով համակված՝ անկարելի էր այլևս խաղաղօրէն դիտել իսկապէս հազուագիւտ, իսկապէս յուզիչ տեսարանը... Երկու հարիւր սաժէն երկարութիւն ունեցող թեք փողոցը լայնակից փողոցներով ու նրբանցքներով՝ լցված էր ծով-գլուխներով, ժողովրդի, մեծի ու փոքրի ծովացած բազմութեամբ, որ շարժվում էր, ալիքանման ծածանվում և չէր սպառվում ընդարձակվելով...

Անձրևը ոչնչով չը զրեց խանգարել թափօրը, թէև հենց սկզբից մանր մաղել սկսեց և գրեթէ անընդհատ շարունակվեց մինչև նրա վերջը։ Գուցէ այդ էր պատճառը, որ չը լուսանկարվեց գերազանցապէս հազուագիւտ այդ տեսարանի գմայելի պահերը։ Ափսոս...

Սակայն հոկտեմբերի 14-ի թափօրը, կուլտուրական յաղթանակով հրձվող բազմութեան հանդիսաւոր գնացքը, իր գործը կատարեց լիակատար կերպով։ Թափօրը կատարեալ տօն եղաւ հանրութեան համար, մաքուր ուրախութեան, հոգեցունց մխիթարութեան զգացմունքով համակելով ամեն սիրտ, ամեն միտք։

Այդ օրն ու այդ տօնը անջնջելի յիշատակ պէտք թողնեն յատկապէս մանուկ սրտերի մէջ, որոնց համար էր ծրագրված փառաւոր գնացքը։ Մանկական սիրտը տօնական հանդիսով կրթելու այլ լաւագոյն եղանակ գտաւոր թէ գտնվէր։

Նախաձեռնողներն ու կազմակերպողները գերազանցօրէն հասան իրանց նպատակին։ Ու պատիւ նրանց։

Անազատ կեսպով հոկտեմբերի 14-ին Ալէքսանդրօպոլի իսկական ժողովրդական տօն կատարեց, մեծի ու փոքրի հաւասար մասնակցութեամբ արժանի մեծարանք տալով համազգային մեծ յօբելիաններին, ազգային մեծ երախտաւորներին։

(«Խուրեան»)

ԲԱԳՈՒԵՑԻՔ ԵՒ ԿՈՒՐԻ ՋՈՒՐԸ

—

Բագու, 20 հոկտեմբերի

Բագուում ջրի սով է եղել անցեալում, սով է այժմ և սով կը լինի ապագայում. այդ՝ բագուեցիների համար հնացած ճշմարտութիւն է։

1901 թ. ամառը բագուեցիք, ինչպէս կասեն, ջրի համար կոտորվում էին, բնակիչները՝ փայտերով զինված՝ թափվել էին քաղաքային տան առաջ և ջուր էին պահանջում։

Այդ օրից անցել է մօտ 13 տարի, Բագուի բնակիչները կրկնապատկվել են, քաղաքը մեծացել, թաղերը աւելացել, բայց ջրի կողմից ոչ մի առաջադիմական քայլ. նոյն ամանն է, նոյն աղամանը։

Քաղաքը ջրի երկու ազբիւր ունի. մէկը, որից օգտվում են ծայրաքնակները, քաղաքի շրջակայքի հո.ի ջրերն է, որոնք տա-